

Հաստատված է  
«Հոգեկան Առողջության Իրազեկման  
Նախաձեռնություն»

հասարակական կազմակերպության

2022 թ-ի օգոստոսի 16-ի

հիմնադիր ժողովի որոշմամբ:

Նախագահ՝

\_\_\_\_\_

Արտակ Բեգոյան

Տպագրված է ընդամենը 2 (երկու)  
օրինակ:

Օրինակ՝ \_\_\_\_

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի գործակալության կողմից

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2022 թ.

Գրանցման համար՝

\_\_\_\_\_:

Հարկ վճարողի հաշվառման համար՝

\_\_\_\_\_

Աշխատակից՝

\_\_\_\_\_ / \_\_\_\_\_

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հոգեկան Առողջության Իրազեկման Նախաձեռնություն»

հասարակական կազմակերպության

2022 թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Հոգեկան Առողջության Իրազեկման Նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Նախաձեռնություն) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
- 1.2. Նախաձեռնության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը եւ հաշվետվողականությունը:
- 1.3. Նախաձեռնությունը գործում է ՀՀ ողջ տարածքում եւ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.4. Նախաձեռնության անվանումն է՝
  - 1.4.1. հայերեն՝ «Հոգեկան Առողջության Իրազեկման Նախաձեռնություն» հասարակական կազմակերպություն, կրճատ՝ ՀԱԻՆ ՀԿ,
  - 1.4.2. անգլերեն՝ “Mental Health Awareness Initiative” Non-Governmental Organization, կրճատ՝ MHAI NGO:
- 1.5. Նախաձեռնության խորհրդանիշն է ցանկացած գույնի՝ հիմնականում կապույտ (գույնի վեցանիշ կոդ՝ 01579B) քառակուսի, որի հարաբերական ստորին-ձախ հատվածում գունային զգալի հակադրությամբ՝ հիմնականում սպիտակ գույնով, պատկերված է հայատառ «հ» փոքրատառը կամ «Arbutus Slab» տառատեսակի իրարկմամբ լատինատառ «h» փոքրատառը՝ որոնք խորհրդանշանում կրում են նույն հատկանիշները:
- 1.6. Նախաձեռնության գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երեվան 0075, Աթոյան անցուղի 15 շենք, բնակարան 11, հեռախոս՝ +374 77 515 775, Էլ. հասցե՝ initiative@mha.am:

## 2. ՆԱԽԱՁԵՂՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1. Նախաձեռնության գործունեության առարկան եւ նպատակներն են՝
  - 2.1.1. նպաստել հոգեկան առողջության իրազեկվածությանը,
  - 2.1.2. նպաստել հոգեկան առողջության խնամքի միջոցների հասանելիությանը,
  - 2.1.3. նպաստել հոգեկան առողջության անցանկալի առանձնահատկությունների ձեւավորման կանխարգելմանը,
  - 2.1.4. նպաստել հոգեկան առողջության առանձնահատկությունների իրազեկվածությանը, ընդունմանը եւ խարանի հաղթահարմանը,

- 2.1.5. իրականացնել հոգեկան առողջությանն առնչվող կրթական, հետազոտական եւ գիտահետազոտական գործունեություն,
  - 2.1.6. նպաստել հոգեկան առողջությանն առնչվող մարդու իրավունքների իրացմանը,
  - 2.1.7. նպաստել հոգեկան առողջության ոլորտի արդի այլ մարտահրավերների լուծմանը:
- 2.2. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Նախաձեռնությունը համագործակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային եւ օտարերկրյա կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ, անհատների հետ եւ կարող է ունենալ օրենքով չարգելված համագործակցության այլ տեսակներ:
- 2.3. Նախաձեռնությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը եւ գործունեության արդյունքները, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
3. **ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ**
- 3.1. Նախաձեռնության անդամ կարող է դառնալ 21 (քսանմեկ) տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է Նախաձեռնության կանոնադրությամբ սահմանված նպատակները եւ ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը: Ինչպես նաեւ՝
- 3.1.1. ընդունում է հոգեկան առողջության ոլորտի հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրացվող էթիկական սկզբունքերը եւ ստանձնում է Նախաձեռնությունում գործունեությունը դրանց համապատասխանեցնելու պատասխանատվությունը,
  - 3.1.2. կատարել է երկամյա անընդմեջ կամավորական աշխատանք Նախաձեռնությունում, սակայն՝
    - 3.1.2.1. երկամյա կամավորության պայմանը չի գործում՝
      - 3.1.2.1.1. հիմնադիր անդամների դեպքում,
      - 3.1.2.1.2. Նախաձեռնության նորաստեղծ մարմինների անդամների դեպքում,
      - 3.1.2.1.3. երբ Նախաձեռնության բոլոր անդամները կողմ են քվեարկում միայն տվյալ անդամի անդամության նպատակով իրավիրված արտահերթ ժողովի՝ տվյալ անդամի անդամության որոշման առաջարկի օգտին:

3.2. Սահմանվում են անդամության Պարզ՝ Հիմնական կամ Մասնագիտական, եւ Չուգակցված՝ Հիմնական եւ Մասնագիտական համակարգեր:

3.2.1. Սահմանվում են Հիմնական անդամության հետեւյալ տեսակները եւ պայմանները՝

3.2.1.1. Մասնակից անդամ՝

3.2.1.1.1. հոգեկան առողջության վերաբերյալ բազմակողմանի գիտելիքներ,

3.2.1.1.2. հոգեկան առողջության ոլորտի խնդիրների եւ մարտահրավերների գիտակցում,

3.2.1.1.3. Նախաձեռնության գործունեության առարկայի եւ նպատակների գիտակցում եւ ընդունում,

3.2.1.1.4. Նախաձեռնության գործունեության նպատակների իրացման պատրաստակամություն,

3.2.1.2. Լիիրավ անդամ՝

3.2.1.2.1. ամենն ինչ նշված է Մասնակից անդամի համար,

3.2.1.2.2. Նախաձեռնության գործունեության նպատակների իրացման գործունեությունն ծավալելու պատրաստակամություն,

3.2.1.2.3. Նախաձեռնության արդյունավետության գործունեության պատրաստակամություն,

3.2.1.2.4. Նախաձեռնության կայունության գործունեության պատրաստակամություն,

3.2.1.2.5. Նախաձեռնության ինքնաբավության գործունեության պատրաստակամություն,

3.2.1.2.6. առնվազն մեկ տարվա անդամությունն որպես Մասնակից անդամ, սակայն՝

3.2.1.2.6.1. տվյալ պայմանը չի գործում հիմնադիր անդամների դեպքում,

3.2.2. Սահմանվում են Մասնագիտական անդամության հետեւյալ տեսակները եւ պայմանները՝

3.2.2.1. Ուսանող անդամ՝

3.2.2.1.1. բարձրագույն կրթության հաստատության հոգեկան առողջության կամ հարակից ոլորտի ուսանող,

3.2.2.2. Մասնագետ անդամ՝

3.2.2.2.1. բարձրագույն կրթության հաստատության հոգեկան առողջության կամ հարակից ոլորտի շրջանավարտ,

- 3.2.2.2.2. հոգեկան առողջության կամ հարակից ոլորտում ներգրավված մասնագետ,
- 3.2.2.3. Ասոցիացված անդամ՝
  - 3.2.2.3.1. ամենևն ինչ նշված է Մասնագետ անդամի համար,
  - 3.2.2.3.2. հոգեկան առողջության ոլորտի հեղինակավոր կազմակերպության առնվազն ասոցիացված անդամ կամ անդամության այլ համարժեք կարգավիճակ,
- 3.2.3. Չուզակցված անդամության պայմանները՝
  - 3.2.3.1. Չուզակցված անդամությամբ անդամները պետք է բավարարեն անդամության երկու տեսակների պայմաններին, մինչդեռ՝
    - 3.2.3.1.1. համանման պայմանների դեպքում՝ բաղադրիչ տեսակների համար նախատեսված պայմաններից առավելագույնին,
  - 3.2.3.2. Չուզակցված անդամություն կարող են ունենալ միայն Մասնագետ եւ Ասոցիացված անդամները, սակայն՝
    - 3.2.3.2.1. միայն Ասոցիացված անդամները կարող են Մասնագիտական անդամությունը զուգակցել Լիիրավ անդամության հետ,
  - 3.2.3.3. Չուզակցված անդամության տիտղոսները կազմվում են անդամության տիտղոսների համակցմամբ՝
    - 3.2.3.3.1. Մասնակից-Մասնագետ անդամ,
    - 3.2.3.3.2. Մասնակից-Ասոցիացված անդամ,
    - 3.2.3.3.3. Լիիրավ-Ասոցիացված անդամ,
- 3.3. Նախաձեռնության հիմնադիրները համարվում են Նախաձեռնության Լիիրավ անդամներ:
- 3.4. Նախաձեռնության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Նախաձեռնության գործադիր մարմնին՝ Նախագահին:
- 3.5. Նախաձեռնության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախաձեռնության Նախագահը (այսուհետ՝ Նախագահ)՝ սույն կանոնադրության հիման վրա:
- 3.6. Նախաձեռնության անդամը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ Նախաձեռնությունից, իսկ Նախաձեռնության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ,
- 3.7. Նախաձեռնության անդամությունը կարող է դադարել կամ դադարեցվել, եթե՝
  - 3.7.1. Նախաձեռնության անդամը ներկայացրել է անդամությունը դադարեցնելու մասին գրավոր դիմում,

- 3.7.2. Նախաձեռնության անդամը առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ չի մասնակցել ժողովին,
- 3.7.3. հայտնի են դարձել փաստեր առ այն, որ անդամակցելու պահին Նախաձեռնության անդամը չի համապատասխանել անդամության պահանջներին,
- 3.7.4. երեք եւ ավելի անգամ Նախաձեռնության անդամը չի վճարել անդամավճարը սահմանված կարգով եւ չափով,
- 3.7.5. Նախաձեռնության անդամը չի կատարել իր պարտականությունները:
- 3.8. Նախաձեռնության հիմնադիր անդամի անդամությունը դադարեցվում է՝
  - 3.8.1. երբ Նախաձեռնության մնացյալ բոլոր հիմնադիր անդամները կողմ են քվեարկում միայն տվյալ հիմնադիր անդամի անդամությունը դադարեցնելու նպատակով հրավիրված արտահերթ ժողովի՝ տվյալ հիմնադիր անդամի անդամությունը դադարեցնելու որոշման առաջարկի օգտին:
- 3.9. Նախաձեռնության անդամների համար՝ բացառությամբ Ուսանող անդամների, սահմանվում է անդամավճար՝ ըստ անդամության տեսակի, որոնց չափերը եւ գանձումը կազմակերպելու կարգը որոշվում եւ հաստատվում են գործունակ հորհրդի, իսկ դրա անգործունակության դեպքում՝ ժողովի կողմից:
- 4. **ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
  - 4.1. Նախաձեռնության անդամը, անկախ անդամության տեսակից, իրավունք ունի՝
    - 4.1.1. ցանկացած դեպքում անվճար օգտվել Նախաձեռնության ծառայություններից,
    - 4.1.2. ներկա գտնվել ժողովին եւ հորհրդի նիստերին անձամբ,
    - 4.1.3. ծանոթանալու Նախաձեռնության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
    - 4.1.4. վերադասության կարգով բողոքարկելու Նախաձեռնության մարմինների որոշումները, ընդ որում՝
      - 4.1.4.1. Նախաձեռնության անդամի կողմից մարմինների որոշումների բողոքարկումն իրականացվում է ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է ժողովը, իսկ քննարկումը կարող է կատարվել նաեւ հեռակա կարգով,
    - 4.1.5. դատական կարգով բողոքարկելու Նախաձեռնության մարմինների ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

- 4.1.6. Նախաձեռնությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Նախաձեռնության կանոնադրության փոփոխությունների, Նախաձեռնության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 (երեք) տարիներին,
- 4.1.7. իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:
- 4.2. Նախաձեռնության անդամը, անկախ անդամության տեսակից, պարտավոր է՝
  - 4.2.1. հոգ տանել Նախաձեռնության հեղինակության մասին,
  - 4.2.2. կատարել Նախաձեռնության կանոնադրական պահանջները եւ կառավարման մարմինների որոշումները,
  - 4.2.3. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
  - 4.2.4. պահպանել Նախաձեռնության Վարքագծի եւ Էթիկայի կանոնները՝ եթե այդպիսիք կան,
  - 4.2.5. անդամության տեսակից կախված վճարել անդամավճար:
- 4.3. Նախաձեռնության կանոնադրական պահանջները խախտելու կամ Նախաձեռնության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Նախաձեռնության անդամի նկատմամբ Նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Նախաձեռնության անդամությունից հեռացնելու ձևով:

## 5. ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1. Նախաձեռնության կառավարման մարմիններն են ժողովը, Խորհուրդը եւ գործադիր մարմինը՝ Նախագահը:
- 5.2. Նախաձեռնությունը կարող է ունենալ Նախաձեռնության աշխատակազմ (այսուհետ՝ Աշխատակազմ):
- 5.3. Նախաձեռնության բարձրագույն կառավարման մարմինը ժողովն է:
- 5.4. Նախաձեռնության ընթացիկ կառավարման մարմինը Խորհուրդն է:
  - 5.4.1. Խորհրդի ձեւավորման ընթացակարգերը գործում են միայն այն դեպքում, երբ Նախաձեռնության անդամների քանակը եւ կարգավիճակը բավարար են Խորհրդի ձեւավորման համար,
  - 5.4.2. Խորհրդի նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Նախաձեռնության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի,

- 5.4.3. Խորհրդի նախագահը ներկայացնում է Նախաձեռնությունը ՀՀ-ում եւ օտարերկրյա պետություններում:
- 5.5. Նախաձեռնության ամենօրյա գործունեությունը ղեկավարում է Նախագահը:
  - 5.5.1. Նախագահին իր լիազորություններն իրականացնելիս Նախաձեռնության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:
- 5.6. Նախաձեռնության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Նախաձեռնության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:
  - 5.6.1. Նախաձեռնության հերթական Ժողովը գումարվում է 5 (հինգ) տարին մեկ անգամ: Նախաձեռնության հերթական Ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձեւով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը եւ տեղը, ինչպես նաեւ Ժողովի օրակարգի նախնական տարբերակը եւ այդ մասին ոչ ուշ, քան 21 (քսանմեկ) օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Նախաձեռնության անդամներին եւ կառույցներին:
  - 5.6.2. Նախաձեռնության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի, Խորհրդի կամ Նախաձեռնության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:
  - 5.6.3. Նախաձեռնության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 9 (ինը) օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի եւ վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 (հինգ) օր առաջ:
  - 5.6.4. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
    - 5.6.4.1. Նախաձեռնության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
    - 5.6.4.2. այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Նախաձեռնության մասնակցության մասին որոշման ընդունումը,
    - 5.6.4.3. Նախաձեռնության կառուցվածքի հաստատումը,
    - 5.6.4.4. Նախագահի ընտրությունը եւ փոփոխումը,
    - 5.6.4.5. Խորհրդի անդամների ընտրությունը եւ փոփոխումը,

- 5.6.4.6. Խորհրդի անդամների վարձատրության կարգի եւ պայմանների սահմանումը,
  - 5.6.4.7. Նախաձեռնության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին եւ կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
  - 5.6.4.8. Նախաձեռնության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
  - 5.6.4.9. օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:
- 5.6.5. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին եւ Նախաձեռնության կանոնադրությանը համապատասխան, եւ ժողովին մասնակցում է Նախաձեռնության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը եւ քարտուղարը: Ժողովի արձանագրությունները եւ Նախաձեռնության հաշվետվությունները պահպանվում են 5 (հինգ) տարի:
- 5.7. Նախաձեռնության գործունեությանն առնչվող ընթացիկ հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Խորհրդին: Այն հանդիսանում է Նախաձեռնության կոլեգիալ կառավարման մարմինը ժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում:
- 5.7.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
  - 5.7.2. Խորհրդի հերթական նիստը գումարվում է 3 (երեք) ամիսը 1 (մեկ) անգամ: Խորհրդի հերթական նիստը հրավիրում է Խորհրդի նախագահը՝ Խորհրդի անդամների համատեղ հավաքի ձեւով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Խորհրդի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը, ժամը եւ տեղը, ինչպես նաեւ նիստի օրակարգի նախնական տարբերակը եւ այդ մասին ոչ ուշ, քան 7 (յոթ) օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Խորհրդի անդամներին:
  - 5.7.3. Խորհրդի արտահերթ նիստ հրավիրվում է Նախագահի, Խորհրդի նախագահի կամ Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի նախաձեռնությամբ՝ Խորհրդի նախագահի կողմից:
  - 5.7.4. Խորհրդի արտահերթ նիստը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 7 (յոթ) օրվա ընթացքում: Արտահերթ նիստ գումարելու օրվա, ժամի եւ տեղի մասին Խորհրդի անդամները ծանուցվում են արտահերթ նիստ անցկացնելու օրվանից առնվազն 3 (երեք) օր առաջ:
  - 5.7.5. Խորհուրդն ընտրվում է ժողովի կողմից 5 (հինգ) տարի ժամկետով:

- 5.7.6. Խորհուրդը չի կարող երկու անգամ անընդմեջ ունենալ ամբողջությամբ նույն կազմը:
- 5.7.7. Խորհուրդը կարող է ունենալ միայն 3 (երեք) անդամ:
- 5.7.7.1. Խորհրդի անդամ կարող է ընտրվել Նախաձեռնության Հիմնական կամ Չուգակցված անդամությամբ այն անդամը, որը Նախաձեռնությանն անդամակցում է առնվազն 2 (երկու) տարի եւ ընդգրկված չէ Ժողովի կողմից ձեւավորված կառավարման այլ մարմիններում, սակայն՝
- 5.7.7.1.1. երկամյա անդամության պայմանը չի գործում՝
- 5.7.7.1.1.1. հիմնադիր անդամների դեպքում,
- 5.7.7.1.1.2. երբ տվյալ պայմանը հնարավոր չի դարձնում ձեւավորել Խորհուրդ եւ Նախաձեռնության բոլոր անդամները կողմ են քվեարկում միայն տվյալ անդամի Խորհրդի անդամության թույլատվության նպատակով հրավիրված արտահերթ Ժողովի՝ տվյալ անդամի Խորհրդի անդամության թույլատվության որոշման առաջարկի օգտին:
- 5.7.7.2. Խորհուրդը մասամբ է գործում կամ ժամանակավորապես չի գործում, եթե՝
- 5.7.7.2.1. Նախաձեռնությունը չունի Խորհուրդ, առկա չէ Խորհրդի անդամության առնվազն 3 (երեք) թեկնածու, Խորհուրդը կազմված չէ 3 (երեք) անդամից, չի ընտրվել Խորհրդի 3 (երեք) անդամ կամ Խորհրդի կազմն ամբողջությամբ նույնն է ինչ անմիջապես նախորդող Խորհրդինը: Այս դեպքերում՝
- 5.7.7.2.1.1. նշանակվում է 21 (քսանմեկ) օր ժամանակ Խորհրդի անդամի թեկնածության առաջադրման համար,
- 5.7.7.2.1.1.1. եթե թեկնածուների քանակը հավասար է կամ ավել Խորհրդի նախատեսված կազմից՝
- 5.7.7.2.1.1.1.1. սահմանված ժամանակահատվածից հետո 7 (յոթ) օրվա ընթացքում գումարվում է արտահերթ Ժողով միայն Խորհրդի կազմի ընտրության նպատակով,
- 5.7.7.2.2. Խորհուրդը կազմված է 2 (երկու) անդամներից եւ Խորհրդի նախագահն այդ կազմում է՝
- 5.7.7.2.2.1. Խորհրդի անդամները շարունակում են իրենց գործունեությունը՝ մինչեւ Խորհրդի նոր կազմի հաստատումը,
- 5.7.7.2.3. Խորհուրդը կազմված է 2 (երկու) անդամներիցից եւ Խորհրդի նախագահն այդ կազմում չէ կամ Խորհուրդը կազմված է 1 (մեկ) անդամից՝

- 5.7.7.2.3.1.1. Խորհուրդը ժամանակավորապես դադարեցնում է իր գործունեությունը եւ Խորհրդի անդամ/ները զրկվում է/են Խորհրդի անդամությունից:
- 5.7.8. Խորհուրդն իր ձեւավորումից հետո 7 (յոթ) օրերի ընթացքում ընտրում է Խորհրդի նախագահ Նոր կազմով Խորհրդի առաջին նիստի ժամանակ:
- 5.7.9. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից 5 (հինգ) տարի ժամկետով:
- 5.7.10. Խորհրդի նախագահն ընտրվելուց անմիջապես հետո Խորհրդի անդամներից մեկին անժամկետ նշանակում է որպես Խորհրդի քարտուղար:
- 5.7.11. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը:
- 5.7.12. Խորհրդի նիստերի արձանագրությունները կազմում է Խորհրդի քարտուղարը:
- 5.7.13. Ժողովն իր իրավասության հետեւյալ հարցերը պատվիրակում է Խորհրդին՝
- 5.7.13.1. Նախաձեռնության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու եւ դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
  - 5.7.13.2. որոշումներ ընդունելու Նախաձեռնության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,
  - 5.7.13.3. Նախագահի վարձատրության կարգի եւ պայմանների սահմանումը,
  - 5.7.13.4. Նախաձեռնության աուդիտն իրականացնող աուդիտորի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Նախաձեռնությանը ենթակա է պարտադիր աուդիտի,
  - 5.7.13.5. Նախաձեռնության Ռազմավարության հաստատումը, եթե Նախաձեռնությունը նախատեսում է ունենալ Ռազմավարություն,
  - 5.7.13.6. 5 (հինգ) տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Նախաձեռնության գործունեության եւ գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,
  - 5.7.13.7. Նախաձեռնության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը:
- 5.7.14. Խորհուրդն իրավասու է լուծել Նախաձեռնության գործունեության ցանկացած այլ հարց՝ բացառությամբ ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված եւ նախագահի իրավասության հարցերի:

- 5.7.15. Խորհրդի անգործունակության ժամանակահատվածում ժողովի իրավասության խորհրդին պատվիրակված հարցերով զբաղվում է ժողովը:
- 5.7.16. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե գումարվել է Նախաձեռնության կանոնադրությանը համապատասխան, եւ նիստին մասնակցում է Խորհրդի բոլոր անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Խորհրդի նիստի որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների առնվազն երկու երրորդով:
- 5.7.16.1. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի անդամի Խորհրդից հեռացման հարցը, ապա Խորհրդի տվյալ անդամը հարցի քննարկմանը եւ քվեարկությանը չի մասնակցում:
- 5.7.16.2. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են Խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները ստանձնած Խորհրդի անդամը եւ Խորհրդի քարտուղարը կամ նրա պարտականությունները ստանձնած Խորհրդի անդամը: Նիստերի արձանագրությունները պահպանվում են 5 (հինգ) տարի:
- 5.7.16.3. Խորհրդի նախագահի Խորհրդի նիստին չմասնակցելու պարագայում Խորհրդի տվյալ նիստի ընթացքում Խորհրդի նախագահի պարտականությունները ստանձնում է Խորհրդի այլ անդամ՝ բացառությամբ Խորհրդի քարտուղարի:
- 5.7.16.4. Խորհրդի քարտուղարի Խորհրդի կազմում չլինելու կամ Խորհրդի նիստին չմասնակցելու պարագայում Խորհրդի տվյալ նիստի ընթացքում Խորհրդի քարտուղարի պարտականությունները ստանձնում է Խորհրդի այլ անդամ՝ բացառությամբ Խորհրդի նախագահի:
- 5.8. Նախաձեռնության գործադիր մարմինը նախագահն է: Նախագահը ղեկավարում է Նախաձեռնության ամենօրյա գործունեությունը եւ վարում է ժողովի նիստերը: Նախագահը վարում է Նախաձեռնության նոր ձեւավորված Խորհրդի բոլոր նիստերը՝ քանի դեռ Խորհուրդը չի ընտրել Խորհրդի նախագահ: Նախագահը վարում է Խորհրդի այն արտահերթ նիստերը՝ որոնք տեղի են ունենում իր նախաձեռնությամբ:
- 5.8.1. Նախագահն ընտրվում է ժողովի կողմից 5 (հինգ) տարի ժամկետով:
- 5.8.2. Նախագահի իրավասությունները ներառում են Նախաձեռնության ամենօրյա գործունեության կառավարման, ինչպես նաեւ Նախաձեռնության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:
- 5.8.3. Նախագահը Նախաձեռնության կանոնադրությանը, Խորհրդի եւ ժողովի որոշումներին համապատասխան՝
- 5.8.3.1. ապահովում է Խորհրդի եւ ժողովի որոշումների կատարումը,

- 5.8.3.2. տնօրինում եւ կառավարում է Նախաձեռնության ցանկացած տեսակի եւ չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ եւ կնքում Նախաձեռնության անունից,
  - 5.8.3.3. ներկայացնում է Նախաձեռնությունը ՀՀ-ում եւ օտարերկրյա պետություններում,
  - 5.8.3.4. տալիս է լիազորագրեր,
  - 5.8.3.5. բանկերում բացում է Նախաձեռնության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) եւ այլ հաշիվներ,
  - 5.8.3.6. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ եւ վերահսկում դրանց կատարումը,
  - 5.8.3.7. հաստատում է Նախաձեռնության հաստիքացուցակը եւ տարեկան ծախսերի նախահաշիվը,
  - 5.8.3.8. հաստատում է Նախաձեռնության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական եւ այլ կանոնները,
  - 5.8.3.9. հաստատում է Նախաձեռնության, ինչպես նաեւ նրա մարմինների հաշվետվությունները,
  - 5.8.3.10. հաստատում է ժողովների գումարմանը նախորդող տարիների Նախաձեռնության գործունեության եւ գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 (հինգ) տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը,
  - 5.8.3.11. ընդունում է Նախաձեռնության անդամ եւ հեռացնում Նախաձեռնության անդամությունից,
  - 5.8.3.12. իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:
- 5.8.4. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Նախաձեռնության կանոնադրության, ժողովի որոշումների, Խորհրդի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

## 6. ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1. Նախաձեռնությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 6.2. Նախաձեռնությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ եւ շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ,

սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր եւ օրենքով  
չարգելված այլ գույք:

- 6.3. Նախաձեռնության գույքի ձեւավորման աղբյուր կարող են լինել՝
  - 6.3.1. Նախաձեռնության անդամների ներդրումները,
  - 6.3.2. Նախաձեռնության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
  - 6.3.3. իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առեւտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
  - 6.3.4. դրամական մուտքերը պետական բյուջեից,
  - 6.3.5. նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
  - 6.3.6. հանգանակությունները,
  - 6.3.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:
- 6.4. Նախաձեռնության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացման համար:  
Նախաձեռնության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջեւ չի կարող բաշխվել:

## 7. ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 7.1. Խորհրդի գործունակության դեպքում՝
  - 7.1.1. Նախաձեռնությունը կարող է լուծարվել Խորհրդի որոշմամբ կամ դատարանի վճռով,
  - 7.1.2. Խորհուրդը կազմավորում է լուծարային հանձնաժողով եւ օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:  
Նախաձեռնությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղում է Նախաձեռնության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 7.2. Խորհրդի անգործունակության դեպքում՝
  - 7.2.1. Նախաձեռնությունը կարող է լուծարվել ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով,
  - 7.2.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով եւ օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

Նախաձեռնությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղում է Նախաձեռնության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

- 7.3. Նախաձեռնությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 16.08.2022թ.